ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 15

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստին ներկա էին 8 ավագանու անդամներ ՝ Խաչիկ Վարդանյանը, Ռուսլան Օհանյանը, Աիդա Սարգսյանը, Նարեկ Նալբանդյանը, Դավիթ Մուրադյանը, Գոհար Պառավյանը, Սերյոժա Այվազյանը,Արսեն Գրիգորյանը:

Բացակա էին՝ Վարսենիկ Քալաշյանը, Համլետ Գևորգյանը, Տիգրան Արոյանը, Ալիկ Սարգսյանը, , Վրույր Այվազյանը, Արտյոմ Տոնոյանը, Թամարա Գրիգորյանը:

Նիստին մասնակցում էին վարչական ղեկավարներ՝ Ա.Մագթաղյանը, Հ. Վարդանյանը Գոռ Աղաջանյանը Կարեն Լալազարյանը, Մարտին Ալավերդյանը,համայնքապետարանի աշխատակիցներ ՝
Ա.Մարիկյանը, Մ.Մեսրոպյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Խաչիկ Վարդանյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Սերինե Նալբանդյանը</u>:

Համայնքի Ղեկավարը ներկայացրեց օրակարգը, ավագանին քննարկեց և դեմ քվեարկեց օրակարգին՝ առաջարկելով օրակարգ ընդգրկել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին հարցը:

Քննարկումից հետո ավագանին ՝ 8-կողմ, 0-դեմ ձայներով՝ հաստատեց նոր օրակարգը:

Օրակարգում՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
/Զեկ.Խ. Վարդանյան/
2.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/ԶԵԿ.Մ.Մեսրոպյան/
3.Գյուլագարակ համայնքի 2024թ. բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:
/Զեկ. Մ.Մեսրոպյան/
4.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 25- օրյա վարժական հավաքներին մեկնած զինապարտների ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
/ԶԵԿ.Ս.Նալբանդյան/
5.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի նորածիններ ունեցող և հարազատին կորցրած ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
/Զեկ. Ս.Նալբանդյան/
6.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակի համայնքապետարանի կարիքների համար ծառայողական ավտոմեքենա ձեռք բերելու մասին:

/Զեկ.Ռ. Օհանյան/
7. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2024թվականի հունիսի 18-ի թիվ 63-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
/Զեկ.Ս.Նալբանդյան/
8. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2023թվականի ապրիլի 17-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
/Զեկ.Ս.Նալբանդյան/
9. Հողի հարկի , փոխադրամիջոցի գույքահարկի տույժերի արտոնություններ սահմանելու մասին:
/Զեկ.Ռ.Օհանյան/
10. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:
/Զեկ.Ռ.Օհանյան/
11.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանելու մասին:
/ԶԵԿ.Ս. Նալբանդյան/

Լսեցին՝
/

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Խ.Վարդանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2024թ. հոկտեմբերի 15-ի արտահերթ նիստիօրակարգը՝համաձայն հավելվածի:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 94-Ա/

Լսեցին՝
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿ.Մ.Մեսրոպյան/
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի
5-րդ կետով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
1.Հաստատել Գյուլագարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 95-Ն/

Լսեցին՝

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Մ.Մեսրոպյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Ընդունել ի գիտություն Գյուլագարակ համայնքի 2024թ. բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 96-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 25 ՕՐՅԱ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻՆ ՄԵԿՆԱԾ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ.Ս.Նալբանդյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նպատակով դիմումների քննարկման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 14-Ա որոշումը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի բյուջեից՝
   25-օրյա վարժական հավաքներին մեկնած զինապարտների ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 97-Ա/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ.Ս.Նալբանդյան/

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նպատակով դիմումների քննարկման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան,հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները, ինչպես նաև համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ

խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննող հանձանժողովի եզրակացությունը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից

ա/ նորածիններ ունեցող ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն/ համաձայն թիվ 01 հավելվածի

բ/ հարազատին կորցրած ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն թիվ 02 հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 98-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ.Ռ.ՕՀԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ հավանություն համայնքի բյուջեի 5121 հոդվածից տրամադրել 11 000 000/տասնմեկ միլիոն/ ՀՀ դրամ մրցութային կարգով Գյուլագարակի համայնքապետարանի կարիքների համար ծառայողական ավտոմեքենա ձեռք բերելու համար:

2.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 17.05.2024 թվականի թիվ 63-Ա որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 99-Ա/

Լսեցին՝
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ԹԻՎ 63-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ.Ս.Նալբանդյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով , Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերին մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ,Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Գյուլագարակ համայնքի ավագանու 18.06.2024թ. թիվ 63-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 100-Ա/

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի ԹԻՎ 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ս.Նալբանդյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով , Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերին մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ,որոշում եմ.

1. Գյուլագարակ համայնքի ավագանու 17.04.2023թ. թիվ 37-Ա որոշման 01,02,03 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 101-Ա/

Լսեցին՝

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ռ.Օհանյան/

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012թ. հունիսի 22--ի թիվ 822 որոշումը, Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով , «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հաշվի առնելով բնակիչների դիմումները՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Սահմանել՝

1. Գյուլագարակ համայնքի բնակիչների հողի հարկի տույժերի արտոնություններ՝ համաձայն հավելված 01-ի:
2. Գյուլագարակ համայնքի բնակչի փոխադրամիջոցի գույքահարկի տույժի արտոնություն՝ համաձայն հավելված 02-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 102-Ա/

Լսեցին՝

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ռ.Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ մասով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 689 -րդ հոդվածով ,հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Բնական գազի անխափան մատակարարման, գազահամակարգերի սպասարկման և անվտանգ շահագործման նպատակով, տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ,Պուշկինո, Ամրակից , Գարգառ բնակավայրերի 2022 թվականի սուբվենցիոն ծրագրով կառուցված՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ներքոհիշյալ վկայականներում նշված գույքը (գազահամակարգը) անհատույց օգտագործման իրավունքով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելու համար՝

h/h	**Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը**	**Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի տրման ամսաթիվը**
1.	23092024-06-0060	23.09.2024թ.
2.	16092024-06-0053	16.09.2024թ.
3.	16092024-06-0044	16.09.2024թ.
4.	16092024-06-0061	16.09.2024թ.
5.	16092024-06-0027	16.09.2024թ.
6.	16092024-06-0034	16.09.2024թ.
7.	16092024-06-0060	16.09.2024թ.
8.	16092024-06-0045	16.09.2024թ.
9.	16092024-06-0052	16.09.2024թ.
10.	16092024-06-0062	16.09.2024թ.
11.	16092024-06-0063	16.09.2024թ.
12.	16092024-06-0031	16.09.2024թ.

2. Թույլատրել Գյուլագարակ համայնքի ղեկավար Խաչիկ Վարդանյանին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ հետ կնքել անշարժ գույքի վերոհիշյալ վկայականներում նշված գույքերի անհատույց օգտագործման պայմանագրեր՝ իրականացնելով նաև դրանց առընչվող անհրաժեշտ փաստաթղթերի ստորագրման, դրանցից բխող գործառույթների (այդ թվում՝ նոտարական վավերացման) կազմակերպման և պատշաճ իրականացնման գործընթացը:
3. Սույն որոշմամբ նշված գույքերը անհատույց օգտագործման իրավունքով հանձնել (գույքի անհատույց օգտագործման պայմանագրերը կնքել) 5 (հինգ) տարի ժամկետով, սահմանելով, որ եթե կողմերից որևէ մեկը պայմանագրերի գործողության ժամկետից 1 (մեկ) ամիս առաջ չի հայտնում դրանք լուծելու կամ նոր պայմանագիր կնքելու մասին, ապա պայմանագիրը, նույն պայմաններով, շարունակաբար երկարաձգված են համարվում հինգական տարի ժամկետով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 103-Ա/

Լսեցին՝

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Ձեկ.Ս.Նալբանդյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և նույն օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
1.Գյուլագարակ համայնքի ավագանու հաջորդ նիստի օր նշանակել 2024 թվականի նոյեմբերի 15 - ին, ժամը՝ 11:00-ին
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 104 -Ա/

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՔՐՏՈՒՂԱՐ

ՍԵՐԻՆԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ